ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 194-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
2. . Դիլիջան քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
3. . Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:
   Զեկ. Ա. Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:

Զեկ. Ա. Սանթրոսյան

9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին:

Զեկ. Ա. Սանթրոսյան

10. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Զեկ. Ա. Սանթրոսյան

11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 185 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Զեկ.Ա.Սանթրոսյան

12. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին:

Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՍԿԵԼ
3. ԹԱՍՐԱՉՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱՉԱՐՅԱՆ ՎԱՐԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԱՆ
8. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՍՈՆ
9. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 195-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Մյասնիկյան փողոցի թիվ 72 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0316-0053 ծածկագրով հողում քաղ. Վիկտոր Հարությունյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ մակերեսը 65,67քմ:

- Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա փողոցի թիվ 82 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0141-0001 ծածկագրով հողում քաղ. Ռուզաննա Պողոսյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ մակերեսը 29,0քմ:

- Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 99 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0134-0003 ծածկագրով հողում քաղ. Ռուբեն Ղուկասյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություններ. մասնավորապես բնակելի տուն մակերեսը 65,72քմ և պարիսպ մակերեսը 1,12քմ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

- Դիլիջանի քաղաքային համայնքի Մյասնիկյան փողոցի թիվ 72 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0316-0053 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ մակերեսը 65,67քմ-85371 դրամ:

- Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա փողոցի թիվ 82 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0141-0001 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ մակերեսը 29,0քմ-49300դրամ:

- Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 99 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի 11-003-0134-0003 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություններ. մասնավորապես բնակելի տուն մակերեսը 65,72քմ-335172 դրամ և պարիսպ մակերեսը 1,12քմ - 3808 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՍՐԱՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
9. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 196-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիլիջան համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից Դիլիջան քաղաքային համայնքի ֆոնդային բյուջե է վճարվել 3466000 դրամ:
Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 27.07.2006թ. թիվ 1098-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի, Դիլիջան քաղաքային համայնքի ղեկավարը նշված ֆինանսական միջոցի օգտագործման վերաբերյալ ավագանու քննարկմանն է ներկայացրել կապիտալ ծախսերի երկու ծրագիր՝ «Դիլիջան քաղաքի թիվ 6 մանկապարտեզի աստիճանների նորոգում և տարածքի բարեկարգում» և «Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 247շենքի տանիքի վերանորոգում»:
Ելնելով վերոգրյալից՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը, Դիլիջան քաղաքային համայնքի 2015թ. Բյուջեի ֆոնդային մասի այլ հիմնական միջոցների իրացումից մուտքագրված 3466000 դրամ գումարն ուղղել «Նախադպրոցական կրթություն»/բաժին 09, խումբ 01 դաս 01, հոդված 5113/, «Դիլիջան քաղաքի թիվ 6 մանկապարտեզի աստիճանների նորոգում և տարածքի բարեկարգում» ծրագրի իրականացմանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 197-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Շահումյան 14 բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչները խնդրանքով վերանորոգելու շենքի տանիքը:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքի տանիքը տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել են, ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը, ինչպես նաև բնակֆոնդին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 14 բնակելի շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից <Բնակարանային շինարարություն> /բաժին 06 . խումբ 01, դաս 01, հոդված5113/ հատկացնել 6359440 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 198-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կալինինի փողոցի 247 բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչները, խնդրանքով վերանորոգելու շենքի տանիքը:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքի տանիքը տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել է, ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը, ինչպես նաև բնակֆոնդին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 247 բնակելի շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից <Բնակարանային շինարարություն> /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված5113/ հատկացնել 5064020 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 199-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Օրջոնիկիձե փողոցի 65 բնակելի շենքի բնակիչները խնդրանքով վերանորոգելու շենքի տանիքը:
Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված շենքի տանիքը տարիների ընթացքում չվերանորոգվելու, չպահպանվելու հետևանքով, ինչպես նաև արտաքին ազդեցություններից քայքայվել է, ինչը վնաս է հասցնում բնակիչների անվտանգությանը, ինչպես նաև բնակֆոնդին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 65 բնակելի շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից <Բնակարանային շինարարություն> /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված5113/ հատկացնել 12579130 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 200-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի երկրագիտական թանգարան-պատկերասրահի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման կահավորման դիզայն» աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ: Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել լրացուցիչ աշխատանքների գնում համաձայն համապատասխան կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի երկրագիտական թանգարան-պատկերասրահի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման կահավորման դիզայն/լրացուցիչ աշխատանքներ/» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից «Թանգարաններ և ցուցասրահներ»/բաժին 08, խումբ 02դաս 02, հոդված 5122/, հատկացնել 1518320 դրամ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 201-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կալինինի փողոցի 4-րդ նրբանցքի բնակիչները, խնդրանքով վերանորոգելու քաղաքի ներհամայնքային նշանակության մինչև Վ.Անանյանի անվան դպրոց տանող ավտոճանապարհը:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Կալինինի փողոցի 4-րդ նրբանցքից մինչև Վ.Անանյանի անվան դպրոց ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից <Ճանապարհային տրանսպորտ> /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 6591530 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌԼԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 202-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել քաղաքի վերակառուցված հասարակական տրանսպորտի 9 կանգառներում տեղադրելու համար ձեռք բերել նստարաններ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի հասարակական տրանսպորտի 9 կանգառների համար նստարանների ձեռք բերում և տեղադրում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասից «Հանգիստ, մշակույթ և կրոն» /բաժին 08 , խումբ 06, դաս 01, հոդված 5112/ հատկացնել 990000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԿԱՐՈՒՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 203-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքի հանրակրթական դպրոցներում մանկապատանեկան սպորտի մասսայականացմանը նպաստելու նպատակով 6-9-րդ դասարանցիների համար կազմակերպել մարզախաղեր:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և նշված առաջնության կազմակերպման համար Դիլիջան քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի վարչական մասից «Այլ մշակութային կազմակերպություններ /բաժին 08 խումբ 02 դաս 04/ հատկացնել հոդված 4237 -108000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՍԿԵԼ
3. ԹԱՍՐԱՉՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱՉԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 204-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 12 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջան քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի <Ընտանիքի անդամներ և զավակներ> /բաժին 10 խումբ 4, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 165000 դրամ, այդ թվում ՝

- ք.Դիլիջան Կալինինի 169 բն,10 հասցեի բնակիչ Աշոտ Ղուկասյանին -20000 դրամ
- ք.Դիլիջան Այգեստան 55 հասցեի բնակիչ Սեդա Ալիխանյանին -10000 դրամ
- Ք.Դիլիջան Սայաթ-Նովա 150 հասցեի բնակիչ Գարեգին Թամրազյանին- 20000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 205-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 185 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի կազմում ընդգրկված՝ Դիլիջանում ներդրումային ծրագրեր իրականացրած, անձանց գրությունները և ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 185 որոշման մեջ կատարել լրացում.

1. 1-ին կետում ,,Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,,-ից հետո լրացնել ,,-լիազոր ներկայացուցիչ՝ Մարտին Գալստյան,,

2. 2-րդ կետում ',,Դիս Փրոփերթիս,, բարեգործական հիմնադրամ,,-ից հետո լրացնել ,,-լիազոր ներկայացուցիչ՝ Արթուր Հակոբյան,,

3. 3-րդ կետում ',,ՔեմփՎենչուրս,, փակ բաժնետիրական ընկերություն,,-ից հետո լրացնել ,,-լիազոր ներկայացուցիչ՝ Վազգեն Սեդրակյան,,

4. 4-րդ կետում ',,Իռ-Վինգ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,,-ից հետո լրացնել ,,-լիազոր ներկայացուցիչ՝ Հայկուհի Վարդանյան,,

5. 5-րդ կետում ',,Հ և Տ Հակոբյաններ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,,-ից հետո լրացնել ,,-լիազոր ներկայացուցիչ՝ Վաչագան Գևորգյան,, :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 206-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՍԿԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Հավելված
Դիլիջան համայնքի ավագանու
28.10.2015 թվականի թիվ 206-Ա
որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դիլիջանում քաղաքաշինությանը և ներդրումների խրախուսմանը համայնքի բնակիչների, Համայնքում ներդրումներ իրականացնող անձանց, հանրության մասնակցությունը և իրազեկումը, ինչպես նաև քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացման նկատմամբ հանրային վերահսկողություն ապահովելու նպատակով ստեղծվում է Դիլիջան համայնքի ղեկավարին կից Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման հասարակական հիմունքներով մշտապես գործող խորհրդակցական մարմին (այսուհետ Խորհուրդ):

2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության համաձայն:

3. Խորհրդի կազմը հաստատում է Դիլիջանի ավագանին՝ սույն Կանոնադրությամբ սահմանված դիմումի և դրանց կից ներկայացված փաստաթղթերի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Խորհրդի բնականոն գործունեությունը ապահովում է Դիլիջան համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

5. Խորհուրդը իր նիստերը կազմակերպում է Դիլիջան համայնքի ղեկավարի նստավայրի շենքում, եթե Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի կայացվել:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Խորհրդի գործունեության նպատակն է Դիլիջան համայնքի զարգացման քառամյա ծրագրի, Դիլիջանի գլխավոր հատակագծի, գոտևորման, քաղաքաշինական

կանոնադրության, ճարտարապետական լուծումների, քաղաքաշինական նախագծերի, քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգ նախագծերի, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի օտարման, վարձակալության, կառուցապատման, օգտագործման իրավունքով այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրման, առաջարկվող Ներդրումային ծրագրերի վերաբերյալ եզրակացության տրամադրումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ Դիլիջան համայնքում քաղաքաշինական գործունեության նորմատիվ իրավական ակտերով սահմանված պայմանների և պահանջների իրականացման նկատմամբ ուսումնասիրության իրականացումը:

7. Խորհրդի գործառույթներն են՝

1) Դիլիջան համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ Դիլիջանի քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտևորման նախագծի, դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների վերաբերյալ եզրակացության տրամադրում,

2) համայնքի զարգացման քառամյա ծրագրի նախագծի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

3) Դիլիջան համայնքի քաղաքաշինական կանոնադրության նախագծի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

4) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերի վերաբերյալ եզրակացության տրամադրում, որոնց պատվիրատուն է Դիլիջան համայնքը.

5) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, համայնքի ավագանու սահմանած պայմաններով, սահմանված կարգով օգտագործման տրամադրվող՝ համայնքի սեփականություն համարվող գույքերի կամ հողամասերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

6) քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

7) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծման թույլտվության հայտերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

8) ճարտարապետաշինարարական նախագծերի, շինարարության (քանդման) թույլտվությունների հայտերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

9) ավարտված շինարարության շահագործման փաստագրման հայտերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

10) տեղական նշանակության ավտոճանապարհներին արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության հայտերի վերաբերյալ եզրակացության տրամադրում,

11) ինքնակամ շինարարությունների կանխարգելման ու կասեցման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Տավուշի մարզպետին և (կամ) Դիլիջան համայնքի ղեկավարին,

12) շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում և քաղաքաշինական փաստաթղթերի համապատասխան կառուցապատման ուսումնասիրության իրականացում և առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջան համայնքի ղեկավարին,

13) շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման ուսումնասիրության իրականացում և առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջան համայնքի ղեկավարին և (կամ) ավագանուն,

14) սույն օրենքով սահմանված արգելված գործունեության տեսակների ավելացման և (կամ) փոփոխման վերաբերյալ առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջան համայնքի ղեկավարին և (կամ) ավագանուն,

15) Խորհրդի քննարկմանը ներկայացված ներդրումային ծրագրի վերաբերյալ եզրակացության տրամադրում ներդրումային ծրագրի նախագիծը ներկայացնող անձին:

8. Խորհրդի խնդիրն է՝

1) նպաստել տեղական ինքնակառավարման համակարգի, համայնքի բնակիչների, հասարակական կառույցների և ներդրողների կապերի զարգացմանը և ամրապնդմանը,

2) աջակցել Դիլիջան համայնքի երկարաժամկետ և յուրօրինակ զարգացման ծրագրերի իրականացմանը,

3) նպաստել Տեղական իշխանության, հասարակության և ներդրողների կարիքներին համապատասխան համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակմանը,

4) աջակցել միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և դրանց համապատասխան քաղաքաշինական նախագծերի իրականացմանը,

5) նպաստել քաղաքաշինական բնագավառում անօրինականությունների բացահայտմանը,

6) աջակցել Դիլիջանի քաղաքաշինական և Տարածքում ներդրումային ծրագրերի իրականացման թափանցիկության, հաշվետվողականության, իրազեկման և հրապարակայնության ապահովմանը,

7) ապահովել համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների և միավորումների առաջարկությունների և դրանց վերլուծության արդյունքների ներկայացումը համապատասխան իրավասու մարմնին,

8) աջակցել միջազգային, տեղական կառույցների ու համայնքի միջև կապերի սերտացմանը, ներդրումային ծրագրերի իրականացմանը,

9) նպաստել պետություն-մասնավոր համագործակցության խորացմանը:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Խորհուրդը կազմված է 9 (ինը) անդամից, որի կազմը ձևավորվում է՝

ա) առնվազն 5 (հինգ) անդամ Դիլիջանում ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր ներկայացուցիչներից՝ ընդ որում ծրագիր իրականացրած յուրաքանչյուր անձ հնարավորություն ունի ներկայացնելու մեկ ներկայացուցչի թեկնածություն, և ծրագիր իրականացրած անձանց կողմից սույն մասով սահմանված քանակից ավել թեկնածու ներկայացնելու դեպքում նշանակումն իրականացվում է առաջնահերթություն տալով այն անձանց, որոնց կողմից իրականացված ծրագրի ծավալը ավելի մեծ է,

բ) 1 (մեկ) անդամ ավագանու անդամներից,

գ) 3 (երեք) անդամ համայնքի բնակիչներից, որոնք քաղաքաշինության կամ ճարտարապետության բնագավառում ունեն առնվազն 5 (հինգ) տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

10. Խորհուրդը համարվում է կազմավորված, երբ նշանակվել են դրա անդամների կեսից ավելին:

11. Խորհրդի անդամները նշանակվում են 3 (երեք) տարի ժամկետով՝ բացառությամբ Խորհրդի առաջին կազմի:

12. Խորհրդի անդամներին նշանակում է Դիլիջան համայնքի ավագանին՝ սույն գլխով սահմանված կարգով:

13. Խորհրդի առաջին կազմում՝

1) երեք անդամ նշանակվում են մեկ տարով՝ ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր մեկ ներկայացուցիչ, մեկ ավագանու անդամ և մեկ ինքնառաջադրված անձ,

2) երեք անդամ նշանակվում են երկու տարով՝ ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր երկու ներկայացուցիչներ և մեկ ինքնառաջադրված անձ,

3) երեք անդամի նշանակվում են երեք տարով՝ ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր երկու ներկայացուցիչներ և մեկ ինքնառաջադրված անձ,

14. Խորհուրդն ունի նախագահ, քարտուղար և անդամներ, որոնք Խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

15. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կազմից՝ գաղտնի քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների թվի ձայների մեծամասնությամբ:

16. Խորհուրդը գլխավորում է խորհրդի նախագահը:

17. Խորհրդի կազմում նախագահի կողմից կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր՝ որոշակի հարցերի ուսումնասիրություններ, քննարկումներ և առաջարկություններ ներկայացնելու համար:

18. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում, բացառությամբ ավագանու անդամի համար նախատեսված տեղի, Դիլիջան համայնքի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում Դիլիջան համայնքի պաշտոնական կայքում:

19. Սույն Կանոնադրության 19-րդ կետով սահմանված հայտարարությամբ առնվազն սահմանվում է՝

1) դիմումների ներկայացման ընթացակարգը և վերջնաժամկետը,

2) խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը,

3) խորհրդի անդամի համար դիմելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը,

4) դիմումին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

5) խորհրդի անդամի թեկնածուների ընտրության և նշանակման կարգը:

20. Խորհրդի անդամի համար թեկնածություն ներկայացնելու համար ներդրումային ծրագիր իրականացրած անձը Տեղական ինքնակառավարման մարմին է ներկայացնում Դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

1) Իրավաբանական անձանց դեպքում՝ կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ռեգիստրի վկայականի պատճենը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը,

2) Դիլիջան համայնքում ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների չափը հավաստող փաստաթուղթ(եր) (ծառայությունների, շարժական կամ անշարժ գույքի ձեռքբերման պայմանագիր, աուդիտի հաշվետվություն, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացված տեղեկություններ կամ հաշվետվություններ):

21. Սույն Կանոնադրության 21-րդ կետով սահմանված փաստաթղթերից բացի ներկայացվում է նաև հետևյալ փաստաթղթերը՝

1) Թեկնածուի անձնագրի պատճենը,

2) Սոցիալական քարտի պատճենը,

3) Աշխատանքային գրքույկի պատճենը,

4) Մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը:

22. Դիլիջան համայնքի՝ քաղաքաշինության կամ ճարտարապետության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող խորհրդի անդամների համալրման նպատակով՝ ինքնառաջադրվող թեկնածուն Դիմումին կից ներկայացնում է Սույն կանոնադրության 22-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

23. Դիմումի ձևը հաստատում է Ավագանին:

24. տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմը խորհրդի անդամի թափուր տեղի համալրման նպատակով դիմումի և սույն կանոնադրությամբ

նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհավաստեն ներկայացված տեղեկատվության իսկությունը:

25. Դիմումների ներկայացման ժամկետը ավարտվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Դիլիջան համայնքի ղեկավարը հրավիրում է ավագանու նիստ՝ Խորհրդի անդամի(ների) նշանակման վերաբերյալ:

26. Ավագանու նիստին Դիլիջան համայնքի ղեկավարը ներկայացնում է տեղեկանք՝ Խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ ընդունված դիմումների և կից փաստաթղթերի, ինչպես նաև դրանց սույն կանոնադրության համապատասխանության վերաբերյալ:

27. Հաշվի առնելով Օրենքի և սույն կանոնադրությամբ սահմանված պահանջները՝ Դիլիջան համայնքի ղեկավարը Ավագանու հաստատմանն է ներկայացնում Խորհրդի անդամի(ների) նշանակման առաջարկը, բացառությամբ ավագանու անդամ հանդիսացող խորհրդի անդամի թեկնածուի: Ավագանու անդամ հանդիսացող խորհրդի անդամ նշանակում է ավագանին իր կազմից:

28. Խորհրդի անդամի(ների) նշանակման մասին որոշումը կայացնելուց հետո Դիլիջան համայնքի ղեկավարը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որոշման պատճենը ուղարկում է Ներդրումային ծրագիր իրականացրած կամ ինքնառաջադրված անձին և հրապարակում է Տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնական կայքում:

29. Խորհրդի անդամի թեկնածուի դիմումը կարող է չքննարկվել, եթե

1) Ներդրումային ծրագիր իրականացրած անձը վերջին վեց ամսվա ընթացքում տեղական բյուջեի հանդեպ ունի կուտակված պարտավորություններ,

2) չեն ներկայացվել սույն կանոնադրությամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը կամ ներկայացվել է կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն,

3) թեկնածուն դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

4) թեկնածուն տառապում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել իր պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը,

5) թեկնածուն դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

6) օրենքով սահմանված այլ դեպքերում:

30. ՏԻՄ աշխատակազմը վարում է խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ դիմումների ընդունման էլեկտրոնային կամ թղթային գրանցամատյան, որի ձևը հաստատում է Ավագանին:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

31. Խորհրդի նախագահը.

1) իրականացնում է խորհրդի ղեկավարումը,

2) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,

3) հրավիրում է Խորհրդի նիստերը,

4) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,

5) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը,

6) նախագահի բացակայության ժամանակ նրան փոխարինում է խորհրդի այլ անդամ՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ,

7) Խորհրդի կազմում ստեղծում է աշխատանքային խմբեր,

8) կատարում է աշխատանքի բաշխում աշխատանքային խմբերի միջև:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

32. Խորհրդի քարտուղարը.

1) Նշանակվում է Խորհրդի նախագահի կողմից՝ Դիլիջան համայնքի ղեկավարի ներկայացմամբ ՏԻՄ աշխատակազմի աշխատակիցներից,

2) Կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,

3) Նիստի մասին սույն կարգով նախատեսված ժամկետում իրազեկում է Խորհրդի անդամներին,

4) Վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Խորհրդի անդամը իր գործունեությունն իրականացնում է անձամբ:

34. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

1) անձնական կամ ներդրումային ծրագիր իրականացրած անձի դիմումի հիման վրա,

2) լիազորությունների ժամկետը լրանալու դեպքում,

3) երեք ամիս անընդմեջ անաշխատունակության պատճառով իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը,

4) եթե անհարգելի պատճառով երկու անգամից ավելի չի մասնակցել նիստերին,

5) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում,

6) դատարանի կողմից անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում,

7) ավագանու անդամի լիազորությունների ժամկետը լրանալու դեպքում,

8) խորհրդի անդամի մահվան դեպքում:

35. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում տվյալ անդամի տեղում նշանակում կատարվում է այդ անդամի լիազորությունների չլրացած ժամկետով: Եթե չլրացած ժամկետը պակաս է մեկ տարուց, ապա Խորհրդի նոր անդամի լիազորությունների ժամկետը սահմանվում է երեք տարի՝ գումարած չլրացած ժամկետը:

36. Խորհրդի անդամի իրավունքներն են՝

1) նիստերին ներկայացնել նախագծեր և առաջարկություններ,

2) ղեկավարվել քաղաքական, գաղափարական և անձնավորված ազդեցություններից անկախ գործելու սկզբունքով,

3) խուսափել սեփական գնահատականը հրապարակավ ներկայացնելուց՝ մինչև հեղինակի /հեղինակային խմբի/ կողմից ավարտված նախագծի պաշտոնական ներկայացումը:

4) նախապես ծանոթանալ խորհրդի նիստի օրակարգին:

37. Խորհրդի անդամի պարտականություններն են՝

1) անձամբ մասնակցել խորհրդի նիստերին և որոշումների ընդունմանը,

2) նախապես տեղեկացնել խորհրդի քարտուղարին իր բացակայության վերաբերյալ,

3) աջակցել խորհրդի գործնեությանը,

4) կատարել սույն կարգով նախատեսված այլ պարտականություններ:

ԳԼՈՒԽ 7. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Խորհուրդն իր գործունեությունը կազմակերպում է խորհրդի նիստերի միջոցով:

39. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

40. Խորհրդի անունից իրավունք ունի հանդես գալ խորհրդի նախագահը, վերջինիս բացակայության դեպքում խորհրդի անդամը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

41. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են խորհրդի նիստերին:

42. Խորհուրդն ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է կայացնում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

43. Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով խորհրդի նախագահի հետ:

44. Խորհրդի նիստի օրակարգը խորհրդի քարտուղարը ներկայացնում է Խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նիստի օրակարգը հրապարակվում է ՏԻՄ պաշտոնական կայքում նիստից առնվազն մեկ օր առաջ:

45. Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ Համայնքի ղեկավարի, խորհրդի Նախագահի կողմից:

46. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

47. Խորհուրդն ապահովում է իր աշխատանքների հրապարակայնությունը:

48. Խորհուրդը կարող է ունենալ ձևաթուղթ:

49. Խորհրդի նիստը համարվում է կայացած խորհրդի նշանակված անդամների ընդհանուր թվի մեծամասնության ներկայության դեպքում:

50. Խորհրդի աշխատանքներին կարող են մասնակցել Տավուշի մարզպետը և Դիլիջան համայնքի ղեկավարը, վերջիններիս լիազորված անձինք, ինչպես նաև խորհրդի անդամ չհանդիսացող հրավիրված մասնագետներ: Խորհրդի նիստերը կարող են ուղիղ հեռարձակվել ՏԻՄ պաշտոնական կայքում:

51. Դիլիջան համայնքի ղեկավարը կարող է առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ նախապես իրազեկելով նիստի օրվա մասին հրավիրել խորհրդի նիստ, այդ թվում նաև՝ արտահերթ նիստ:

52. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

53. Խորհրդի նիստի արձանագրությունում նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

2) նիստին ներկա անձանց մասին տվյալներ,

3) նիստի օրակարգը:

4) օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ զեկույցի հակիրճ բովանդակությունը, հարցերի և պատասխանների, ինչպես նաև խորհրդի նիստին եղած ելույթների հիմնական դրույթները,

5) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,

6) նիստում ընդունված որոշումները:

54. Խորհրդի կայացրած որոշումները հրապարակվում են ՏԻՄ պաշտոնական կայքում, որոշումը կայացնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

55. Խորհրդի անդամներն իրավունք ունեն ծանոթանալու խորհրդի նիստի արձանագրություններին:

ԳԼՈՒԽ 8. ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

56. Խորհուրդն իրականացնում է ընթացիկ և նպատակային ուսումնասիրություններ:

57. Ընթացիկ ուսումնասիրությունները իրականացվում են ինքնակամ շինարարությունների կանխարգելման ու կասեցման, իսկ Նպատակային ուսումնասիրություններն իրականացվում են շինարարության թույլտվությամբ

նախատեսված ժամկետներում և քաղաքաշինական փաստաթղթերի համապատասխան կառուցապատման, շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նպատակով:

58. Նպատակային ուսումնասիրություններն իրականացվում են Խորհրդի որոշման առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 9. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

59. Դիլիջան համայնքի ղեկավարը Սույն կանոնադրության 7-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ ենթակետերով սահմանված նախագծերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ներկայացնում է Խորհուրդ՝ եզրակացության ստացման համար: Խորհուրդը 10-օրյա ժամկետում քննարկում է սույն կետով սահմանված նախագծերը և Դիլիջան համայնքի ղեկավարին ներկայացնում է եզրակացություն:

60. Դիլիջան համայնքի ղեկավարը Սույն կանոնադրության 7-րդ կետի 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված նախագծերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ՏԻՄ աշխատակազմ մուտքագրվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Խորհուրդ՝ եզրակացության ստացման համար: Խորհուրդը 5-օրյա ժամկետում քննարկում է սույն կետով սահմանված նախագծերը և Դիլիջան համայնքի ղեկավարին ներկայացնում է եզրակացություն:

61. Դիլիջան համայնքի ղեկավարը սույն կանոնադրության 7-րդ կետի 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ ենթակետերով սահմանված Խորհրդի առաջարկները հաշվի առնելով առնվազն 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկում է միջոցառումներ առաջարկությամբ ներկայացված խնդիրների ուղղությամբ: